

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՐԳՆԵՐՈՒ, ԹՈՒՐԲՈՅ ԵՒ ԻՍՐԱԵԼԻ ԾՈՎԱՅԻՆ ՈՒԺԵՐՈՒ ՄԻԱՅԵԱԼ ՌԱԶՄԱՊՈՐՉԵՐ

ԱՆԳԱՐԱ, 30 (ԱՅՓ).- Մ. Նահանգներու, Թուրքիոյ եւ Իսրայէլի ծովային ուժերը յառաջիկայ ամիս միացեալ ռազմափորձերու պիտի ձեռնարկեն՝ Թուրքիոյ Միջերկրականէն ծովափէն անդին միջազգային ջուրերու մէջ, յայտնած է թրքական բանակը Չորեքշաբթի օր:
«Փնտռուքի եւ փրկութեան» բնոյթի ռազմափորձերը, զորս երեք երկիրները 1998էն ի վեր կը կայացնեն, Օգոստոս 13ին տեղի պիտի ունենան, ըստ բանակին հաղորդագրութեան:
Մ. Նահանգներու ուժերը քաջալերանքով, Թուրքիա եւ Իսրայէլ 1996ին պիտուրական գործակցութեան մը համաձայնագիր մը կնքած էին:

ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԱՅԻՔ ՀԱՐԻՐԻՆ



Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ երէկ Դամասկոսի մէջ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրին: Հարիրի Ասատի փոխանցեց Բրիտանիա կատարած իր այցելութեան մանրամասնութիւնները:

Սուրիական «Սանա» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ քննարկումի առարկայ դարձած են արաբական աշխարհը յուլոյ հարցեր, շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ լիբանանէսուրիական միացեալ շահերուն առնչուող շարք մը հարցեր:

ՊԱՍՊԱՍՅՈՒ ՄԵՋ

ԼԱՀՈՒՏ - ՅՈՎՆԱՆԵԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ այցելեց Պապատի եւ տեսակցութիւն մը ունեցաւ նախագահ Վոր. Էմիլ Լահուտի հետ:

Հանդիպումին քննարկուեցան երկրին քաղաքական ներկայ իրավիճակը, ինչպէս նաեւ շրջանային հարցեր, նախարարութեան կողմէ գործադրուելիք ծրագիրներ:

ԱՊԱՇՏՈՎՈՒԹԵԱՆ ՊԱՐԻՍՊԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Ապահովութեան պարիսպին կառուցումը շարունակելու իր որոշումով Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն ցոյց կու տայ, թէ յանձնառու չէ խաղաղութեան քարտէսին գործադրութեան գծով տուած իր խոստումներուն, յայտնեցին պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատարներ:

Ապահովութեան հարցերու նախարար Մոհամէտ Տահլան ըսաւ, որ Սպիտակ Տան մէջ, նախագահ Ճորձ Պուշի հետ տեսակցութեան աւարտին Շարոնի կատարած յայտարարութիւնը կը հաստատէ, թէ Իսրայէլ լուրջ մօտեցում չունի խաղաղութեան ճամբու քարտէսին հանդէպ, զոր ըստ երեւոյթին չ'ուզէր գործադրութեան դէպք, հակառակ անոր որ ծրագրուել վայելէ Միացեալ Նահանգներուն եւ միջազգային ընտանիքին հովանաւորութիւնը: «Պարիսպը կը մերժենք, որովհետեւ անիկա ապահովական թիրախ չունի: Այս պարիսպը յաւելելի առեւտրային պիտի իրաւորէ պաղեստինցիներուն եւ Իսրայէլացիներուն միջեւ, որովհետեւ անիկա ցեղապաշտութեան ու բաժանումի պատ է», աւելցուց Տահլան:

Շարոն, որ Երեքշաբթի օր հանդիպում մը ունեցած էր Պուշի հետ, յայտարարեց, որ «Ապահովութեան ցանկապատի» կառուցումը Այսրոյորդանացի մտահոգութիւններն ու մտավախութիւնները փոխանցած է: Ան աւելցուց, որ ապահովութեան միջոցառումներու մասին պաղեստինեան իշխանութեան եւ Իսրայէլի միջեւ գործակցութեամբ միայն կարելի պիտի ըլլայ ճշմունք թեթեցունել Իսրայէլի կառավարութեան ուշերէն: Միւս կողմէ, պաղեստինցի եւ Իսրայէլացի բարձրաստիճան պաշտօնատարներ երէկ կը պատրաստուէին նոր հանդիպում մը ունենալու, քննարկելու համար ապահովական հարցեր: Տահլան, որ հանդիպում պիտի ունենար պաշտպանութեան նախարար Շաուլ Մոֆապի հետ, պիտի պահանջէ, որ Իսրայէլեան ուժերը հեռանան Ռամալլայէն, ինչպէս նաեւ երկրորդ քաղաքէ մը, որ Քալքիլիան կամ Նապլուսը կրնայ ըլլալ:



Յորդանացի թագաւորը կը դիմարտէ Ապպար

Եւ Իսրայէլի միջեւ պիտի շարունակուի: Շարոն յայտարարութիւնը կատարած էր անտեսելով Ուաշինգթոնի քննադատութիւնը:

Պաղեստինցիները կը մերժեն պարիսպը, որովհետեւ կը վախեն, որ անիկա դառնայ վերջնական սահմանագիծը Իսրայէլի եւ անկախ Պաղեստինի մը միջեւ: Պարիսպը կ'անցնի պաղեստինեան գիւղերէ՝ Կանտնի Իսրայէլի սահմաններուն մէջ առնելով: Տահլան հարց տուաւ, որ եթէ պարիսպը ապահովութեան համար է, ապա ինչո՞ւ պաղեստինեան գիւղերուն մէջէն կ'անցնի: Ապահովութեան պարիսպին հանդէպ վերապահութիւն յայտնած է նաեւ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Բլեր: Ան ըսաւ, որ Բրիտանիա իր մտահոգութիւններն

Հ.Յ.Դ.-ՀՌԱԿ ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Երեւանի Հ. Յ. Դ. «Միմն Վրացեան» կեդրոնին մէջ երէկ տեղի ունեցաւ հանդիպում մը Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինին եւ Հայաստանի Ռազմավար Ապստակաւոր Կուսակցութեան (ՀՌԱԿ) նորընտիր նախագահներուն միջեւ:

Հանդիպումին մասնակցեցան Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ ընկ. Արմէն Ռուստամեան, անդամներ Մպարտակ Սէյրանեան ու Արտաւազ Դարբինեան եւ ՀՌԱԿի նախագահներ Յարութիւն Առաքելեան եւ Մէխակ Գեորգեան:

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչը ներկայացուց այն մարպերը, որոնց մէջ Գերագոյն Մարմինը կը ծրագրէ միացեալ գործունէութիւն ծաւալել ՀՌԱԿի հետ: Այս առումով կարեւոր նկատուեցան Սահմանադրական բարեփոխումներու, ընտրական համակարգի բարեփոխման եւ փոստոստեան դէմ պայքարի հարցերը, որոնց շուրջ Հ. Յ. Դ. կը ծրագրէ միջկուսակցական աշխատանքներ (կլոր սեղաններ, քննարկումներ, աշխատանքային խումբերու ձեւաւորում, եւ այլն) իրականացնել՝ շահագրգիռ քաղաքական ուժերու ձամբով ընդհանուր փաստաթուղթերու ձեւաւորման ուղղութեամբ:


ՀՌԱԿի նախագահները կարեւոր նկատելով ներկայացուած խնդիրները պատրաստակամութիւն յայտնեցին մասնակցիլ յիշեալ աշխատանքներուն՝ բոլոր միջոցներով:

Անոնք դիտել տուին, թէ յանձին Հ. Յ. Դ. ին իրենք կը տեսնեն թէ՛ Ազգային Ժողովին եւ թէ՛ համաձայնական կառավարութեան մէջ իրենց տեսակէտներն ու առաջարկները ներկայացնող եւ պաշտպանող քաղաքական գործընկեր մը:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան նաեւ Հայաստանի ներքաղաքական իրավիճակին եւ յետընտրական շրջանին, ինչպէս նաեւ հայ-թրքական յարաբերութիւններուն վերջին պարզացումներուն առնչուող հարցեր:

Կողմերը համաձայն գտնուեցան խորացնել միջկուսակցական յարաբերութիւնները, պատշաճ զննելով աշխատանքային հունի մէջ:

ԱԼԻԵՒ ՄԱՀԱՅԱԾ Է



Ազգայնական նախագահ Հայտար Ալիեւի աճող քաղաքական վիճակին, ինչպէս նաեւ կենդանու թեւան շուրջ հակասական տեղեկութիւններու երապարակումը կը շարունակուի: «Նոյեան Տապան» լրատու գործակալութիւնը «Հիրրիյէթ» ընդդիմադիր թերթին քաղաքականութիւնը յարեց, որ Ալիեւ մահացած է: «Հիրրիյէթ» մեկնաբանութեան համաձայն, Երկուշաբթի օր Ալիեւի որդին եւ հաւանական յաջորդը Իլիւս Ալիեւի այն յայտարարութիւնը, թէ նախագահը առողջական լաւ վիճակի մէջ է եւ թէ շուտով պիտի վերադառնայ Պաքո, պարզապէս սուտ է եւ կը ծառայէ ժամանակ շահելու՝ երկրէն դրամ դուրս բերելու համար: Այլապէս, նշած է թերթը, Ալիեւ անպայման ելոյթ կ'ունենար հետադարձութեան:

Իր կարգին, ընդդիմադիր «Ապալոլոգ» թերթը վկայակոչելով թրքական «Կիլիսիա» հիւանդանոցին մէջ աշխատակիցը, յայտնած է, թէ Ալիեւ մահացած է Յուլիս 26ի երեկոյեան, եւ այդ պատճառով այլ այլեւ ոչ մէկուն կ'արտօսուի անոր սենեակը մուտք գործել: Ականատեսի մը վկայութեամբ, Հայտար Ալիեւ Յուլիս 15ին հասած է Պաքոի «Պիսա» օդակայանը, սակայն անոր վիճակը խիստ վատարացած է եւ իրնք անմիջապէս նոյն օդանավով վերադարձուցած են Թուրքիա:

«Ենի Մուսաթա» ընդդիմադիր թերթին համաձայն, իշխանութիւնները շտապ ձեւով Պաքոյ մէջ հաստատած են բանակի յատուկ ջոկատներ: Իշխանութիւնները չեն հերքած այս փաստը, սակայն բացատրած են, թէ Հայաստանի եւ Ազգայնական մէջ տակաւին անլոյծ խնդիրներ կան, հետեւաբար զօրքերու տեղաշարժը բնական երեւոյթ է:

ՄԻՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ԴԵՄ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ԻՐԱՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆՇԱՆԱԿԵՑ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ

Իրաքի փոխանցման հանգրուանի իշխող խորհուրդի 25 անդամները, որոնք չէին յաջողած համաձայնիլ նախագահի մը մասին եւ որդեգրած էին շարժական նախագահութեան դրոյթները, երէկ շիի Իպրահիմ ժաֆարի նշանակեցին առաջին նախագահը: Խորհուրդը Երեքշաբթի երեկոյեան որոշած էր իննսնամյա շարժական նախագահութիւն մը հաստատել: Ինը նախագահներէն հինգը շիի են, երկուքը՝ սուննի եւ երկուքը՝ քիւրտ, որոնք կը ներկայացնեն Իրաքի գլխաւոր համայնքները: Խորհուրդը տակաւին չորոշեց սակայն, թէ իրաքանշիւր նախագահին նստաշրջանը որ-

քան պիտի ըլլայ: Ժաֆարի առաջին նախագահը եղաւ, որովհետեւ խորհուրդին անդամները որդեգրեցին այբբենական կարգը, որ ընդունուած էր բոլորին կողմէ: Ժաֆարի կը պատկանի շիի «Տաաուա» արմատական կուսակցութեան: Անոր պիտի յաջորդեն երկու շիիներ:

Նախագահական դրոյթեան մը մասին համաձայնութիւն գոյացնելէ ետք, իշխող խորհուրդը պիտի նշանակէ նախարարներ: Յիշեալ աշխատանքը ամբողջացնելէ ետք, խորհուրդը պիտի ձեռնարկէ սահմանադրութեան մշակման եւ ընտրութիւններու կազմակերպ-

ման աշխատանքին: Նշանակուած շիի նախագահներն են Իպրահիմ ժաֆարի, Ահմէտ Շալապի, Իյաս Ալաուտ, Ապտէլպիկ Վաքիմ, Մոհամէտ Պահրէլուլում (80 տարեկան), սուննիները՝ Ատնան Պաշաշի (81 տարեկան) եւ Մոհսէն Ապտէլ Համիտ, իսկ քիւրտերը՝ ժալալ Թալապանի եւ Մասուտ Պարպանի:

Մեքիկացի երեք պինտրներ վիրատուեցան երէկ Պաղատան 100 քմ. դէպի հիւսիս, ուր պիտեայնէր «Առ. Փի. Ճի.» հրթիռներ արձակած էին անոնց վրայ, յայտնեց

ամերիկացի բանբեր մը: Միջադէպը տեղի ունեցած է Սամարայի մէջ, որ կը գտնուի Թիքրիթի ճամբուն վրայ: Միւս կողմէ, հարիւրաւոր ցուցարարներ երէկ հաւաքուեցան իրենց ցեղամիջապետին բնակարանին դիմաց, ուրկէ քայլերի դէպի Պաղատան գլխաւոր փողոցները: Յուրաբարները կը բողոքէին, որովհետեւ ամերիկեան ուժերը անցեալ Կիրակի օր ներխուժած էին ցեղամիջապետին՝ էմիր Ռապիհա Մոհամէտ Հապիպի բնակարանը՝ Սատտամ Հիւսէյնը փնտնելու գործողութեան մը ծիրէն ներս: Ամերիկացի պինտրներ քիւրտ վերաբերում ցու-

ցաբերած էին բնակարանին մէջ գտնուողներուն հանդէպ: Ամերիկեան ուժերը կը շարունակեն հետապնդել Սատտամի հետքերը եւ կը յուսան, որ Ռուսայի եւ Բուսայի նման պիտեայ պիտի գտնեն:

● ԱՒԵԼԻ քան 240 իրաքցի գաղթականներ, որոնք սէնտական անապատային գաղթական մը կը գտնուէին, Երեքշաբթի գիշեր Իրաք վերադարձան 12 տարի իրենց հայրենիքէն հեռու մնալէ ետք: Ռաֆիկ գաղթականային մէջ կ'ապրին մօտաւորապէս հինգ հազար իրաքցիներ, որոնց մեծ մասը մինչեւ տարեկանը պիտի վերադառնայ:

ԱՉԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉՆԵՐՈՒ ԿԱՐԻՔՆԵՐԷՆ ԲԽՈՂ ՇԱՀԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄԸ



ASHNAG

Նախաձեռնությունները Հիբանյան Հայոց թեմի Ազգային առաջնորդարանի Ուսումնական խորհուրդին, 10-18 Յուլիսին տեղի ունեցավ ուսուցիչներու վերաորակավորման եւ ուսումնական յառաջիկայ տարեշրջաններու աշխատանքներու ծրագրումներու յատուկ համաժողովար մը՝ Ինթերնեյշնալ Սթուդի մէջ (Այ. Մի.)։ Առաջին հանգրուանին մանկապարտէզի ուսուցչուհիները ընդգրկող եւ ուսումնական առաջին տարիներուն վրայ կեդրոնացող այս համաժողովարին մասնակցեցան լիբանանահայ ազգային ու թմանկապարտէզներէ մասնաորակա քառասուն ուսուցիչները։

Համաժողովարը կը նպատակադրէր ազգային վարժարաններու մէջ յառաջացնել ուսումնական ծրագիրներու, ինչպէս նաեւ ուսուցման ձեւերու եւ մասնագիտական միատարրութիւն մը։

Նախքան համաժողովարին կայացումը, անցնող տարեշրջանին Ուսումնական խորհուրդը այցելած էր ազգային վարժարաններու մանկապարտէզները եւ հանդիպումներ ունեցած պատասխանատու ուսուցիչներու հետ։ Միաժամանակ գործակցութիւն մշակուած էր Ինթերնեյշնալ Սթուդի Էճիւֆէյշն Ռիսորսըզ սենթրի

(դաստիարակութեան աղբիւրներու կեդրոն) հետ եւ աշխատանք տարուած՝ ազգային վարժարաններու մանկապարտէզներուն համար մշակելու եւ ուսումնական միատեսակ ու դրաւոր ծրագիր մը։



ASHNAG

Գործնական եւ մեր վարժարաններուն կարիքներուն զոհացում տալու համար հարկ էր, որ այս ծրագիրը ընդ տուեալ վարժարաններու մէջ կործող ուսուցիչներէն։

Այս բոլոր ծրագիրները իրականացնելու համար գումարուած վերոյիշեալ համաժողովարը տեղի ունեցավ Կեդրոնին կողմէ ազգային մանկապարտէզներու մէջ կիրարկուած մանկավարժական ծրագիրները նկատի ունենալով, զանոնք բարեփոխելու եւ անոնց վրայ յաւելումներ կատարելու մտասեւեռուով։ Համաժող-

պէս նաեւ՝ ամիսներու ըստ ըստ եւթարժարաններու մէջ ծրագրուած, դասարանի դեկավարման, ուսուցման տարրեր ռազմավարութիւններու, ըստ թեմայի ծրագրումի, արդիւնաւէտ ուսուցման կերպերու, ինչպէս նաեւ ուսուցման ընթացքին եւ անոր արդիւնքներուն մասին տեղեկագիրներու պատրաստութեան վրայ։

Համաժողովարին մասնակցողներուն եւ զայն ներկայացնող մասնադէտներուն միջեւ դրական գործակցութեան շնորհիւ մտքաբուստն ուսուցիչներ իրենց արձակուրդէ ժամերէն զոհեցին՝ ծրագրելու, վերամշակելու եւ առաւել եւս արդիւնաւէտ դարձնելու համար մասնակալական արդի ծրագրաւորումի ձեւերուն համապատասխանող ազգային մանկապարտէզներուն ուսումնական միատարր ծրագիրներու եւ մեթոտներու կազմութեան ի խնդիր։

ԱՌՕՐԵԱՅ ՊԱՏԿԵՐ

ԵՐԲ ԱՉԳԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐ Կ'ՈՏՆԱԿՈՒՄՈՒԻՆ ՅԱՆՈՒՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՇԱՀԵՐՈՒ

Շատ անգամ մարդիկ իրենց գուտ անհատական շահին համար կ'ոտնակոխեն իրենց ազգային - հոգեւոր արժէքները։ Ասիկա պարզապէս կը նշանակէ, որ մեր կեանքին մէջ շատ յաճախ տիրական սկսած է դառնալ եսակեդրոնութիւնը եւ անհատական շահերու գերադասումը՝ հաւաքական շահերէն։

Այս պատճառով դիւրին կը դառնայ հայութենէ հրաժարելը, նպարավաճառէն մէկ քիւ լուրի գնելու երեւոյթին կը սկսի նմանիլ համայնք փոխելը, իսկ խառն ամուսնութիւնը... Գլուխը կ'առնէ եւ կ'երթայ։ Պիտի զա՞յն պահը, երբ հաւաքական զգաստութեան հրաժարուինք ազգովին եւ գիտնանք, որ այս բոլորը կը ծառայեն միայն ու միայն «Սպիտակ ջարդ»ը աւելիով խախտելուն։

Մեր նպատակը չէ աւերակներու վրայ ողբալը։ Պարզապէս պիտի նշենք առօրեայ երեւոյթ մը, որ իր բազմաթիւ կողմերով կը նմանի մեր սփիւռքահայ իրակալնութեան մէջ տեղի ունեցած բազմաթիւ դէպքերուն։

Անթիլիաս այցելութիւնը մը պիտի տայի։ Այս նպատակով ալ վարձեցի ինքնաշարժ մը։

- Ո՛ւր պիտի երթաք,- հարցուց վարորդը բաւական ջերմ ձայնով մը, որ կը մատնէ իր հայկականութիւնը։

- Կաթողիկոսարան։

Այս պատասխանին վրայ վարորդը մեծ - մեծ բացալ իր աչքերը եւ ի՛ր ալ հայ ըլլալը բացայայտելէ ետք հարցուց.

- Կաթողիկոսարան կ'աշխատիս։

- Ո՛ւր,- պարզապէս հոգեւոր այցելութեան համար կ'երթա՞մ։

- Ես ծննդեան թուղթ մը ունիմ, որուն տակ դրոշմ չէ գարնուած. արդեօք կաթողիկոսարանին մէջ այս դրոշմը կը գարնե՞ն։

- Չեմ գիտեր, եթէ կաթողիկոսարանը կը զբաղի այսպիսի աշխատանքներով, բայց այս աշխատանքներուն համար աւելի լաւ կ'ըլլայ, եթէ դիմէք Լիբանանի Հայոց թեմի առաջնորդարան. ան է իրաւաստ կողմը այսպիսի հարցեր լուծելու մէջ։

Յստակ էր, որ վարորդը իր լեզուին տակ ուրիշ շատ բաներ ունէր ըսելիք։ Շուտով խօսակցութեան կծիկը քակուեցաւ. դարձեալ ինքն էր սկսողը.

- Հիմա տուրքերը քանի՞ եղած են։

- Ըսել կ'ուզէք՝ «Ազգային տուրք»ը։

- Այո՛, ճի՛շդ։

- Անկեղծ ըսած, դարձեալ տեղեկ չեմ, եւ կը ներէք, որ ձեզի օգտակար չեմ կրնար հանդիսանալ այս հարցերով։

- Տարիքս 35էն աւելի եղաւ, նշանածս օտար է։ Շուտով պիտի պատուենք, ասոր համար ալ ինձմէ 1 միլիոն 400 հազար ազգային տուրք ու պէտքին։ Միայն դրամ գտնեմք ժամանակ «ազգ»ը մէկուս կարեւորութիւն կու տայ...

Այս բոլոր խօսքերուն ի տես՝ զարմանքս չափ չուներ, երբ վարորդը բացաւ ինքնաշարժին դարակներէն մէկը եւ նոր խմբագրուած ճերմակ թուղթ մը վերցնելով՝ անոր բովանդակութիւնը յանձնեց իմ ուշադրութեանս։

Թուղթին մէջ կային վարորդին մասին անհատական տեղեկութիւններ՝ անուն - մականուն, հօր անուն, մօր անուն, բնակութեան վայր։ Գրուած էր նաեւ, որ այսինչ թուականին սկսեալ նշեալ անհատը այլեւ մաս կը կազմէ յոյն ուղղափառներու համայնքին։ Ստորագրութիւն՝ Լեոնալիբանանի եւ Պաթրոնի յոյն ուղղափառներու առաջնորդին։

- Մենք ալ օրթոտոքս ենք, անոնք ալ օրթոտոքս են, տարբերութիւն չկալ երկուքին միջեւ։ Ինծի ըսուեցաւ. «Քեզմէ ոչ մէկը գումար կ'ուզենք։ Սրտե՛ք բխածը տուր», վրայ բերաւ վարորդը։

Բնականաբար վարորդին ըսածները խոր ընդվզում յառաջացուցին մէջս։ Կաթողիկոսարան հասած էիք.

- Բարեկամ, քեզի միայն մէկ բան կ'ըսեմ։ Ո՛չ, նոյնը չեն երկուքը։ Եւ վաղը վստահաբար կը տեսնես եւ կը գիտակցիս, որ օտարները ի՛նչ հարցեր ունին, որոնց մասին դուն մինչ այդ նոյնիսկ տեղեկ չէիր։ Նպարավաճառի հաշիւով, մէկ - երկու ոսկիի համար համայնք ծախելը աւելի քան ամօթ է։

ԺԱՔ 3. ՅԱԿՈՒԲԵԱՆ

ԱՀԱ ԹԷ Ո՛ՒՐ ԿԸ ԿՈՐՍՈՒԻ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՅՄԱՆ ԵՐԱԶԸ

Քաղաքագէտ չէ, զինւորական ալ չէ, դեղագործ է։ Քարոլին Ճամկէօզ, որ Վանի շրջանի Պահչսարայ դիւղաբաղարանի մէջ ղեկարար մը ընտանաւոր տեղափոխուած էր։ Պահչսարայի համար։ Պահչսարային առաջ, Թուրքիոյ տարբեր շրջաններու մէջ բնակութիւնը հաստատելով հանդերձ, քանիցս ամբաստանուեցաւ քրտական կազմակերպութիւններու անդամակցելու յանցանքով եւ 3,5 ամիս բանտարկուեցաւ։

«Թուրքիոյ մէջ այն անձը որ թրքական ծագում չունի, զանազան ճնշումներու կ'ենթարկուի, մասնաւոր թէ՛ այդ անձը հայ է, զրեթէ՛ ապրելու իրաւունք չունի»։

«Սուրբիոյ մէջ այն անձը որ թրքական ծագում չունի, զանազան ճնշումներու կ'ենթարկուի, մասնաւոր թէ՛ այդ անձը հայ է, զրեթէ՛ ապրելու իրաւունք չունի»։

«Թուրքիոյ մէջ այն անձը որ թրքական ծագում չունի, զանազան ճնշումներու կ'ենթարկուի, մասնաւոր թէ՛ այդ անձը հայ է, զրեթէ՛ ապրելու իրաւունք չունի»։

«Սուրբիոյ մէջ այն անձը որ թրքական ծագում չունի, զանազան ճնշումներու կ'ենթարկուի, մասնաւոր թէ՛ այդ անձը հայ է, զրեթէ՛ ապրելու իրաւունք չունի»։

«Սուրբիոյ մէջ այն անձը որ թրքական ծագում չունի, զանազան ճնշումներու կ'ենթարկուի, մասնաւոր թէ՛ այդ անձը հայ է, զրեթէ՛ ապրելու իրաւունք չունի»։

ՅՈՒՆԻՍ 2000

ՆԱՍԱԿ՝ ԸԱՅՐԵՆԻՔԷՆ

ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

Նոր բնակարան գնած եմ, այս անգամ՝ քաղաքին կեդրոնը։ Վերջին անգամները երեւան հանցին ցաւալի թերութիւն մը. տանիքս նորոգութեան կարիք ունի։ Երկու շաբաթ է վեր ընկերներով վարպետ կը փնտռենք։ Բաւական դժուար խնդիր դարձած է շինարարական որեւէ խնդրի համար լաւ մասնագետ սպասուկները։ Բոլորը գրադած են, գործերը իրարու կը հրմշտկեն եւ մարդիկ արդէն կըրնան լուրջ աշխատավարձ պահանջել իրենց ծառայութիւններուն համար։ Տակաւին փնտռութիւն մ'էջ եմ։

Պատուիրատուներու պահանջը կոտորելու արեւցած է։ Նախապէս ամէն մարդ կըրնար ամէն գործ ընել։ Փակահարութի կարիք ունէիր, ուրեւ ծանօթ մարդ «փորձել» չկայ» ըսելով ձեռքերը կը սօթթեր ու կը փորձեր օգտակար ըլլալ։ Յանախ ալ իրապէս «փորձել» կը լուծուէր, սակայն ոչ՝ մասնագիտական մակարդակի վրայ, եւ ուրեմն՝ խնդրի կըրնուէր փակարար պարգային, առանց բողոքելու իրաւունքի, տարբեր մարդու պէտք է դիմէիր վստահելով միայն ու միայն բախտիդ։ Հիմա պատուիրատուները երաշխիքներ կը պահանջէ եւ ուրեմն որակաւոր աշխատողները կը սկսին տարբերիլ, առանձնանալ, եւ համապատասխանաբար իրենց պահանջած սակերն ալ կը բարձրանան։

Աշխատավարձերու բարձրացումը եւ աշխատուորներու իրաւունքներու պայտսպանութիւնը օրեկուսի մ'աւելնալով ամուր փոխելու վրայ դնելը ինձի համար աւելի կարեւոր է, քան՝ աշխարհով մէկ մեր հայրենիքին մէջ աժան աշխատավարձ գտնելու քարոզչութիւն կատարելը։

Նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով պետական օրէնքներու համակարգում քարոզչութիւն կը տարուի՝ շեփոքաբար շարժելու մէջ աշխատուորի բարձր որակն ու աժան վարձերը, ինչ որ, երկրորդը անշուշտ, միշտ ալ ամէնուցած է զիս։ Անյարմար կը զգամ, մանաւանդ երբ մեր հայրենակից գործարար մարդոց կը դիմենք համոզելու համար, որ փոխանակ Չինաստանի կամ Երրորդ աշխարհի մէկ այլ երկրի մէջ գործարան բանալու, գան Հայաստան, այստեղ գործողներն եւ օգտուելով այստեղի աժան աշխատավարձ վերելու կարելիութենէն՝ թէ՛ իրենց շահը ապահովեն եւ թէ՛ օգտակար ըլլան իրենց ազգակիցներուն։

Այսինքն ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն կը քաջալիքներ մեր ազգակիցներուն։ Զարաշահելու հայ աշխատուորը՝ միշտ արդարացիութիւնով, որ աւելի լաւ է քիչ աշխատավարձով մարդ աշխատի, քան բնու գործ չունեցողով՝ մնայ թշուառութեան գիրկը։ Հաւանաբար ճշմարտութիւն կայ այս մօտեցումին մէջ։ Սակայն անկարելի է անտարբեր մնալ այն դաժան պայմաններուն, որոնց կ'ենթարկուին այստեղ աշխատողները։ Մեր տան կողքին սրբարան մը կայ։ Ամէն առաւօտ ժամը 10:00ին կ'անցնիմ այդ սրբարանին մօտէն ու կը տեսնեմ երիտասարդ մատուցողուհիներ գործի վրայ։ Շատ ուշ երեկոյեան, գրեթէ կէս քիշերին, նոյն աշխատողները տակաւին նոյն տեղին են՝ մէկ սեղանէն միւսը վազելով։ Չեմ կրնար երեւակայնիլ, որ այս աղջիկները իրենք զիրենք երջանիկ կըրնան նկատել, որ գործ ունին, որ սեփական քրտիքով իրենց ապրուստը հոգան։ Համեմատաբար երջանիկ է։ Չեմ կրնար մնամ համեմատութիւններով խաբել ինքզինքս։

Հայաստանի աշխատուորներուն մէկ կարեւոր մասը ունի իր իւրաքանչեւ մօտեցումն ու պատասխանը այս խնդրին։ Չ'աշխատիր։ Կը նախընտրէ անգործ մնալ, քան՝ աժան աշխատավարձով աշխատել։ Մենք կրնանք այդ վերաբերումը նկատել ծուլութեան արդիւնք։ Սակայն, իմ կարծիքով, ուղղակի բողոք է անիրաւութեան դէմ։ Բողոքողներուն մէկ մասը կը դիմանայ շնորհիւ ազգականներու ուղարկած օգնութեան։ Անոնք, որ չունին նման կարելիութիւն, ուշ կամ կանոխ կը կոտորուին ու կը սկսին որեւէ գործով զբաղիլ։

Նետաքրքրական է, օրինակ, ընկերոջս փորձը։ Հրազդան քաղաքի բնակչութեան թշուառ վիճակին մասին կարելի է գաղափար կազմել ամիջապէս, որ քաղաք մտնես։ Համապատասխան անգործութիւնը այստեղ ալ իր աւերիչ հետքերը ձգած է ամէնուր։ Սակայն քաղաքին մօտիկ քարի հանքին մէջ աշխատող ընկերու տեւական օրէն կը ծախողի հրազդանի բանուորները գտնելու իր գործը յառաջ տանելու համար։ Ի վերջոյ, յուսահատած, երեւանէն սկսած է մարդիկ տեղափոխել այստեղ։ Բացատրեցիք։ Միայն թէ՛ դիւրին պատասխաններու գայրակողութեան մի՛ ենթարկուիք։

Հայ մարդը կ'աշխատի, կ'աշխատի սրտով, որակով, եւ է հետանկար տեսնէ այդ գործին մէջ։ Այլ ոչ թէ՛ կեանքը քաշկուտելու լոկ միջոց։ Ամէն ազգի աշխատուոր նոյնը չէ՞։

ԼԱՅՈ ՊՈՂԻԿԵԱՆ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵԿՐՈՒԹԵԱՆ

«Ազգային» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելու համար (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնակալութիւն վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգային» ծանուցումներու գրասենեակը։

ԲԱՄԲԱՍԱԿՆԷ, ԹԷ ԲԱՆՆ ԱՍԱՆԿ

Ժողովրդական երգ մը կայ, որ կը սկսի «Այս պետական սեւ սատանան» բառերով, բայց որ աղաւաղուած է շատերու լեզուին վրայ, որ կ'երգեն՝ «Ապետական սեւ սատանան» բառերով։ Ոչ մէկը հարց կու տայ, թէ այդ անպիտան ոճրագործը երբ «ասպետ կամ ասպետական» եղած է։ Հետեւաբար կը խնդրուի ճշդել այս կոպիտ սխալը, բառերը հասցեագրել ճիշդ տեղին։ Ուրեմն պէտք է մոռնալ «ասպետական»ը, այլ պարզապէս ըսել «այս պետական»։

Երանի թէ երգին հեղինակը (որ անծանօթ է) «այս» ցուցական անկալը տեղաւորէր «պետական»էն ետք, եւ գրէր «պետական այս սատանան» եւ այլն... Մէկ յօսքով, անգիտակցաբար կամ տգիտութեամբ, պատիւը գացած է անարժանի...

Լիբանանի պետական քննութիւնները հազիւ աւարտած՝ մամուլը արձագանգեց պրովէի եւ պաթարթի բնութեան արդիւնքներուն, որ յստակ էին հայկական թէ ազգային վարժարաններու յաջողութիւնները։

Անոնք, որոնք թերահաւատ են ազգային վարժարաններու ուսումնական մակարդակին բարձրութեան, թող իրենց աչքերը եւ ականջները լայն բանան տեսնելու եւ լսելու յաջողութիւններու «հաշիւները» գերազանց, «շատ լաւ» գնահատակներով յորդուցն անուսանցանկերը։

Ապրիլը, արթուն հայրերի, կեցեցե՛ց մեր ուրիշեալ ուսուցիչները։

ԶԱԽԱՐԵԱՆԱԿԱՆ



ԶԱԽԱՐԵԱՆԱԿԱՆ

ՍԵՐ ԽՕՍԵՐԸ

ԱՐՉԱԳԱՆԳԸ ՈՒԺԵՂԱՅՆԵԼՈՒ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹԵԱՄԲ

... Այդ արձագանգը պիտի կրկնուի եւ հետպիտեւէ պօրանալով պիտի հնչէ, մինչեւ որ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու դիմաց ցարդ փակ մնացող պահանջներ վերաքաջուի, ... մինչեւ որ այս հերոսները ծնող հայ ժողովուրդը վերատիրանայ իր բոլոր իրաւունքներուն:

«ԱԶԳԱԿ», 30 Յունիս 1983

«... Առանց հայրենիքի, առանց մեր հողերուն ոչ ապագայ կայ, ոչ կեանք կայ, ոչ ընտանիք կ'ըլլայ»: Արա Գրեքլեանի այս խօսքերը, նուիրականացած իր գերագոյն գոհաբերութեամբ, չեն կորսնցուցած իրենց հնչելու թիւերը եւ արթնցող պատակ պետք է ըլլան բոլոր անոնց, որոնք ունին իրենց այսպէս կոչուած «փիլիսոփայութիւնը» «ազգային գործը հաց չի կերցըներ, ընտանիք չի կառուցեր, ապագայ չի շտկեր»:

Այս, գարբուցիչ ապտակ, որովհետեւ թեւ ժամանակն է, որ պայքարի միջոցները կը պարտադրէ պահանջատէր ժողովուրդներուն, սակայն նուիրումն ու պայքարը ինչ արտայայտութիւններով ալ ըլլան անոնք, կը բխին միեւնոյն յանձնառութեան ոգիէն:

Արդարահատոյց այս գործողութեան հերոսները, իրենց արեան կաթիլներուն հետքերով դերակատար դարձան իրերայաջորդ սերունդներուն ազգային գիտակցութեան կազմաւորման գործընթացին մէջ, իբրեւ անսահման նուիրումի տիրուները...

Լիզպոնի հիմնը ու գիրքն կանխող եւ յաջորդող մարտիկները Հայ Դատի պայքարին մէջ հանգրուան մը իր լրումին հասցուցին՝ Հայկական Յեղափոխութեան հարցը յանձնելով հանրային կարծիքին ու շարունակելով:

Բնականաբար մը ետք, երբ շնորհիւ Հայ Դատի տարբեր մարմիններու աշխատանքներուն, շարք մը պետութիւններ քննարկեցին Հայկական Յեղափոխութիւնը եւ երբ Արցախեան ազատամարտը իր յաղթարշաւին մէջ է, կարելի չէ չխոնարհիլ Լիզպոնի նուիրակներուն յիշատակին առջեւ, որովհետեւ անոնք իրենց արիւնքով օժեցին այն նամբան, գործնէր այսօր կը շարունակենք կտրել:

Եւ երբ այլեւս ունինք ազատ հայրենիք, թերեւս ոչ այդ ամբողջական հայրենիքը, որուն տեսլականով նահատակուեցան ու անմահացան Լիզպոնի հիմնը, երբ այլեւս ունինք պետականութիւն մը Հայ Դատը կրնանք հետապնդել նաեւ պետական մակարդակներու վրայ, Լիզպոնի հիմնը պարտ կը դնեն մեր վրայ առանց տկարացումի եւ փորձութիւններու ենթարկուելու պահանջել նաեւ այսօր եւ հատուցում:

Հատուտակամօրեմ եւ առանց վերապահութիւններու, երկու տասնեակ տարիներ ետք, անգամ մը եւս կու գանք ամբողջութեամբ Լիզպոնի պատգամը եւ շարունակելու անոր արձագանգը...

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՏԵՆՉԵՐ...

«Տարագիր ու աշխարհափիռ հայութեան համախմբում ամբողջական Հայաստանի հողին վրայ»:
Հ. Յ. Մրազիր, Նպատակ Գ. գլուխ

Խոնարհ հասկերու հունտերը, երբ կը թափանցեն այլ դաշտերու հողերուն մէջ, երեւան եկած նոր ծիլերը կը ստանան կերպարանափոխուած դիմագիծ, ազդուելով շրջանի բնութեան ազդակներէն:

Միլեր, որոնք այսօր կ'մթնոլորտին մէջ կամայ թէ ոչ կը կորսնցնեն իրենց ինքնութիւնը՝ արմատական տարրողութիւնը:

Եւ այսպէս, բնութեան տարրերուն նման միեւնոյնն է սփիւռքահայութեան պարագան... Եթէ պահ մը յետագարձ ակնարկ մը ուղղենք, կը նշմարենք, որ դադուլները ունին աստիճանական զարգացումներ, որ մարտիկները երբեմն կը հաւաքեն շատերուն հոգիները...

Եւ մինչ Սփիւռքի մէջ շարունակ տերեւաթափին հակադարձելու համար կը փորձենք թմրկահարեւ ներգաղթի կոչերը, անդին, Հայրենիքի մէջ ակնաշարեր կ'ըլլան նիւթապաշտներու եւ ապագայիներու մշակուածներուն, որոնք օտար խոհանոցներու ղոներուն առջեւ կանգնած կը սպասեն իրենց պնակներուն լիցքաւորման...

Մեր հայրենիքը այսուհետեւ բացարձակ իրականութիւն մըն է. հող մը, որ սակայն աւելի քան երեք կարիքն ունի իր արմատներուն: Երեւոյթն է, որ ասորեայ մտահոգութիւնն պէտք է դառնայ իւրաքանչիւր գիտակից հայ երիտասարդի ու ուսանողի համար:

Հաստատակամօրեմ պէտք է նշենք, որ Սփիւռքի մէջ եղանակը միշտ «արժէ» է, իսկ հայրենի հողին վրայ եղանակներուն հետ պէտք է գոուշօրէն վարուել ու քայլ պահել, նկատի առնելով իւրաքանչիւրին հոյովոյթն ու անդրադարձները...

Սփիւռքեան առօրեային մէջ մարտիկներուն ենթարկուելու բնականոն իրողութիւնն է, իսկ կոծիցերուն ջլատելիլ բնականոն հակազդեցութիւնը... Վերջապէս, Հայրենիքը նոր ծիլերուն նոր դաշտեր պէտք է ստեղծէ ու հայրենի հողը հասկերուն դարձի կանչէ շարունակելու համար պատմական անասան երթը...

ՐԱՅՅԻՆ ՏԵՄԻՐՃԵԱՆ

ԹԻԱՎԱՐԵԼ ՀՈՍԱՆՔՆ Ի ՎԵՐ

Օտարամոլութիւնը ահաւոր իրողութիւն մըն է, որ անհատը կը շեղէ կամ քայլ առ քայլ կը հեռացնէ իր ազգային գիտակցութիւնէն:

Գաղութներուն մէջ օտարամոլութեան հոսանքին ենթարկուելու զլխաւոր ազդակը նշեալ միջավայրին մէջ տարբեր մշակոյթներու, քաղաքակրթութիւններու ու դաւանանքներու գոյութիւնն է: Հայ օտարամոլ անձին մօտ ազգային շրջն ու հաւատքը շատ տկար կ'ըլլան եւ հայրենիքը իրեն գրեթէ ոչինչ կը ներկայացնէ: Կրնանք ըսել նաեւ, որ այս «համաճարակ հիւանդութիւն»ը «սպիտակ ջարդ» է, որ կը նուազեցնէ հաւաքականութեան թիւը, որովհետեւ հայը կը դադրէ հայ ըլլալէ, կորսնցնելով իր սէրը ազգին ու մշակոյթին հանդէպ:

Ընդհանրապէս օտար մշակոյթն կ'ենցաղն ու ապրելակերպը աւելի հանելու կը թուին ըլլալ եւ կը գրաւեն ժողովուրդին հետաքրքրութիւնը: Այսպիսով շատեր կը նախընտրեն իւրացնել օտար բարքերն ու սովորութիւնները, առանց անդրադառնալու կամ մտահոգուելու հայ մշակոյթով եւ լեզուով, որոնք հետզհետէ կը կորսնցընեն իրենց երեւմտի վերելքը եւ դժբախտաբար կ'անտեսուին: Այս հաշուով, անոնք հայկական արժէքներուն կը մօտենան արհամարհանով, ենթադրելով, որ հայ ըլլալը նուազատես է իրենց համար:

Մեր գաղութը յուզող զլխաւոր հարցերէն մէկը դարձած է մեր ժողովուրդին օտարամոլութիւնը:

Այսպէս, մեր շրջանակին մէջ կը հանդիպինք հայ պատանիներու, որոնք երբ հայկական երգ կամ եղանակ լսեն, զանոնք շատ յետամնաց կը գտնեն եւ արագօրէն կ'ուզեն փոխարինել օտար երգերով: Այս նոյն պատանիները իրենց օտար միջավայրին մէջ, խստօրէն կը սրբապղծեն հայ մշակոյթը, աւանդոյթները եւ ազգային արժէքները:

Նոյնպէս շատ յաճախ կը լսենք, թէ հայ դպրոցներու աշակետութեան թիւը տարուէ - տարի կը նուազի: Անցեալին, իրենց բազմաթիւ աշակերտներով հպարտացող դպրոցներ այժմ շատ մտահոգ են ի տես այս թիւի նուազումին: Սակայն ինչ է պատճառը այս երեւոյթին: Օտարամոլութեամբ տարուած ընտանիքներ, որոնք կը փոփոխեն հայրենի հետու մնալ, իրենց զաւակները կ'ուղարկեն օտար դպրոցներ, ուր հայ երեխան հասակ կ'առնէ շատ անգամ նոյնիսկ առանց ճանչնալու Մեսրոպեան տարրերը:

Հակառակ այս բոլորին, այս ընտանիքները առանց վարանելու կ'ուրախանան իրենց զաւակին ընթացքով եւ դժբախտաբար ուրիշներ ալ կը քաջալերեն հետեւելու նոյն ընթացքին: Անոնք կը հպարտանան, թէ իրենց զաւակները շատ հեզասահ արարերէն, Ֆրանսերէն կամ անգլերէն կը խօսին իրենց առօրեայ կեանքին մէջ, եւ այսպէս արար միջավայրին մաս կազմելով հետագային դիւրութիւն կ'ունենան գործի ասպարէզ գտնելու համար:

Սակայն, պէտք է մոռնալ, թէ մեր երեխաներն ու պատանիներն են հիմը ապագայ սերունդներու բարգաւաճման եւ թէ իրենց առողջ կազմաւորումն է, որ պիտի բնորոշէ հայ ընկերութեան վիճակը:

Ուրեմն, հետզհետէ դադուլ ընկալութիւններ կարելու մաս մը սկսած է մոռնալ իր ազգային բարքերը եւ ստրուելի այս կամ այն օտար հոսանքներով: Եւ եթէ տարիներու ընթացքին այս երեւոյթը շարունակուի, անհատներէն անկախ ընդհանուր դադուլն է, որ պիտի կրէ համապատասխան բացասական անդրադարձները:

Փաստօրէն, եթէ այսպիսի մարդիկ կ'արհամարհեն հայ լեզուն, որ ամենատարրական ազգային մեր արժէքներէն մէկը կը համարուի, մեզի կը մնայ գտնել լուծում մը, կասեցնելու կապ զէթ նուազեցնելու այս ահաւոր իրողութիւնը:

Այսպէս, օտար դպրոցներ յաճախող երեխաներուն ու պատանիներուն մօտ ազգային շրջը վառ պահելու համար հարկ է առաջին հերթին միջոցառումներ գտնել գաւնոնք հայկական դպրոցները գրաւելու, որուն զուգահեռ զանոնք մղել մաս կազմելու կամ անգամ դառնալու հայկական միութիւններու եւ կազմակերպութիւններուն: Այս հաշուով, անոնք հայկական միջավայրին ու միջոցառումներէն հետո չեն մնար, աւելի լաւ կը գիտնան հայութեան ու հայկականութեան առաւելութիւններն ու կարեւորութիւնը եւ իրենք իրենց կարգին մասնակցած կ'ըլլան հայակերտումի աշխատանքներուն՝ օրինակ դառնալով ուրիշներու եւ ինչու ոչ ապա նոր քայլեր առնելով ուրիշներ ալ փրկելու օտարամոլութեան հոսանքներէն:

Մինչ օտարամոլութեան հոսանքին դէմ յանդիման գտնուող այլ ազգակներէն մէկը կարելի է նկատել հայ թէ օտար դպրոցներուն եւ համալսարաններուն մէջ ազգային գիտակցութիւն ունեցող երիտասարդութեան տարած աշխատանքները, որոնք կը միտին աշակերտութեան ծանօթացնել Հայ Դատն ու հայ ժողովուրդի արժէքները ներգնում ունենալով այդ գործերուն իրագործման մէջ:

Անշուշտ թէ ասոնք վերջնական լուծումները չեն հանդիսանար, որովհետեւ օտար միջավայրերու մէջ միշտ առկայ է օտարամոլութեան հոսանքը, այսուհանդերձ, եթէ իւրաքանչիւր գիտակից հայ երիտասարդ կարենայ փրկել իր շրջապատէն զէթ երկու հոգի, այս արդէն իսկ հսկայական իրագործում կ'ըլլայ:

ՌԲՌԻ

ՀԱԻԱՍԱՐԱԿՇՈՒՌԹԵԱՆ ՈՒՂԵՆԻՇԸ

Երբ կը խօսինք Սփիւռքի դժուարութիւններուն մասին, բացի հայրենիքէն դուրս ապրելու գագուժին դատապարտուած ըլլալէն, կ'անդրադառնանք կարեւոր ազգակներէն մէկուն՝ ապրիլ իբրեւ հայ, միաժամանակ գոյատեւել իբրեւ Սփիւռքը կազմող պետութիւններու քաղաքացիները:

Չենք խօսիր այն ծայրայեղութեան մասին, երբ անհատը կը սկսի մտածել իր «իսկական» ինքնութեան հայ - քաղաքացիութեան, թէ քաղաքացի - հայութեան մասին: Սակայն մէկ բան ակնյայտ է, որ հայը ուր որ ալ գտնուի հայ է ամէն բանէ առաջ, երբ տարածուելով օտար երկիրներու մէջ կազմած է գաղութներ, կառուցած է եկեղեցիներ, դպրոցներ, ակումբներ, կոթողներ, ունեցած է մամուլ, սովորութիւններով, արուեստներով, արհեստագիտութեամբ ճանչցուելու՝ ուրիշներէն գատնաբար վճռականութեամբ:

Վերոնշեալ աշխատանքներն ու նարարութիւնները հայուն արեան հետ շրջապնդելով կը պարզեն, որոշ յատկանիշներ, երբ անոնց արմատները աշխարհի տարածքին ճիւղաւորուելով հանդերձ կը մնան կայուն ու կառչած ստեղծագործ յղացումներու:

Չուզահետաքր կը ծագի այլ երեւոյթ մը՝ պետութիւններու կեցուածքն ու հայեացքը սփիւռքահայութեան նկատմամբ, երբ այս վերջինին կը վստահին պետական կարգ մը պաշտօններ, գիտական փորձեր կամ հետազոտութիւններ, որոնք անկասկած կը բարձրացնեն հայուն անունն ու պատիւը մտային կամ այլ կարողակներով: Գործը յարգելու Սփիւռքի տարածքին:

Թերեւս պետութիւնները հետաքրքրուի կամ գոհուցանուի կեցուածքներէն հայկական կառոյցներուն եւ աշխատանքներուն նկատմամբ, իսկ հայերը Սփիւռքի պայմաններուն յարմարելով, իրենց գոյութիւնը պահպանելով, իրենց դոշը պարզելով, իրենց յարգանքները շարունակելով, իրենց ուժերը հայրենիքի բարգաւաճման ու օգտակար դառնալու կարեւորութեան մէկ մասնակը համարելով կը գործեն իբրեւ պետութեան քաղաքացի՝ անոր օրէնքներուն ու պարտաւորութիւններուն ենթարկուելով, ինչպէս նաեւ իրաւունքներուն տէր կանգնելով ու արդարութեան ծայրը լսելի դարձնելով:

Կը գործեն իբրեւ Սփիւռք «Հայրենի - օտարութիւն» եզրին միջեւ հասարակչութիւնը անխախտ պահելու, յաջող միջավայր մը ստեղծելու, հաղորդակցման ներառելով միջոց որպէս գրելու, ուրոյն նկարագրի ուղեգիր մարմնաւորելու հասկացողութեամբ:

Ինչպէս ըսինք՝ այս քաղաքացին, կամ սփիւռքեան ճակատագրի տիրացած է նոյնիսկ Սփիւռքի իրականութեան ճնշող տուած անհատը, կը գործէ իբրեւ հայ՝ ազգայնագիտական գործունէ շեշտելով իր գոյութեան մէջ, օտարներուն բացուելու եւ չծնուելու քաղաքականութեամբ, ստրկելու - ստրկեցնելու յառաջադրարքին ապա ինչով, նաեւ իր ներդրումը կատարելով հայրենի հողի բարօրութեան եւ վերահաստատման նիւթերուն:

Գոյատեւել այս պայմաններով կը ճշտակէ սեփական նկարագրով ընթանալ, լաւագոյնին ձգտել, որպէսզի այդ երեք շիղբերը հայութեան, Սփիւռքի եւ քաղաքացիութեան ըմբռնումները ենթակա չդառնան, այլ՝ բախին մեր իրականութեան, մեր պարտաւորութիւններուն ու պահանջներուն, համահասարակութեան վերջին մասն մեր հոգիներուն ու ետքեան մէջ, որպէսզի ամենուրեք հնչէ հայութեան «Անլուելի զանգակատուն»ին բարձրաթիւ խորհուրդը...

ՍԱԼԻՔ ԲԻՒՐՃԵԱՆ

ԿԵՆՍՈՒՈՐՏԻ ՏԱԳՆԱԳԸ

Աշխարհը մօտ մէկուկէս դարէ ի վեր սկսաւ յստակօրէն տառապիլ կենսոլորտի աւերումն: Բարձրագոյն մարդկութեան բարձրագոյն մը, որ մեծ մասամբ անգիտակցաբար տեղի կ'ունենար եւ սկիզբ կ'առնէր մասնաւոր ճարտարարութեան յառաջդիմութեանն է:

Կանաչ տարածքներու ոչնչացումը, ջուրի անհաշիւ գործածութիւնը, երկրաբանական հողերու նուազումը, գործարաններու բազմապատկումը եւ վառելիքի թափումը արտադրութեան գործածութիւնը կրնան ժխտական եւ ծանր անդրադարձ ունենալ յաջորդող սերունդներուն վրայ, ինչպէս որ մեր նախորդներուն գործած աւերներուն վնասները յստակ կերպով կ'ազդեն մեր կեանքին վրայ:

Երէջ անհատներ կը յիշեն այն պահերը, երբ այս «մոխրագոյն» քաղաքներուն տեղ կային դաշտեր, ծառեր ու կանաչութիւն: Միջին տարիքը ունեցող անհատները չեն մոռնար իրենց մանկութեան ժամանակը, երբ կը վայելէին գետերը, որոնց վիճակը այսօր խղճալի է. իսկ այսօրուան երիտասարդութիւնը ենթակայ է ջուրի ու օդի պակասման: Անիկա արդէն իսկ սկսած է խօսիլ անտաններու ու անասուններու անհետացման հարցերուն գծով, մինչ գալիքը...

Իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի պահանջելու ներկայ եւ նաեւ ապագայ սերունդներու համար մաքուր ու առողջ միջավայր մը, բայց իւրաքանչիւր անհատ այս առնչուածութեամբ ունի նաեւ պարտականութիւնը ար-

